



ԱՐՄԱՅՈՒՆ ԱՌԱՋ ՆՈՐ ԴԱՐԱՆ
ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

Ազատարար Փրկիչը

«Եւ զայն կոչեց Յիսուս¹» (Մտ 1.25)

Քրիստոսի ծննդեան յիշատակի այս օրերուն, երբ մեր միտքերը կերթան քսան դարեր անաջ Յիսուսի ծննդեան հրաշալի դրուագին, պահ մը կերեւակայեմ այն ուրախութիւնը, որ ունեցան իր ծնողները՝ Յովսէփ ու Մարիամ: Ծնողական զգացումներու եւ ընտանեկան գալիք երջանկութեան պահն է, մանաւանդ երբ նկատի կունենանք յաջորդական դրուագներով աստուածային միջամտութիւնը՝ հրեշտակին աւետումը եւ Մարիամի յղութիւնը, անոր այցելութիւնը Եղիսաբէթի՝ Յովհաննէս Մկրտիչի մօր, եւ վերջապէս, պարզ մտուրի մը մէջ երկինքի թագաւորին ծնունդը:

Աստուածամայր Մարիամ իր օրհներգութեամբ գովաբանեց զԱստուած՝ ակնարկելով որ իր մէջ յղացուածը փրկութիւն պիտի բերեր մարդկութեան, հօգորները գահագրկելով եւ խոնարհները բարձրացնելով (Մեծացուցեց):

Ու Մարիամ ծնաւ իր զաւակը եւ համաձայն հրեշտակին աւետումին՝ զայն կոչեց Յիսուս, Փրկիչ: Հաւատացեալներու Ազատարարը:

Որպէս Հայ Եկեղեցոյ զաւակ, Քրիստոսը մեր հաւատքին մէջ ընդունեցինք՝ հաւատալով մարդկութեան թէ անհատին փրկութեան: Դարերով աղօթեցինք իրեն, անոր քարոզներն ու պատգամները դարձնելով ամենօրեայ մեր կեանքին զօրութիւնն ու նպատակը, ազգային մեր նկարագիրը դարբնելով քրիստոնէական հաւատքի սկզբունքներով: Որպէս անհատներ, մեր անձերու փրկութեան համար աղօթեցինք ու աղաչեցինք՝ յաւիտենական կեանքի յոյսով լեցուն: Բայց միեւնոյն ատեն, անհատի փրկութիւնը մեր հաւատքին մէջ եղաւ նաեւ հաւաքական, մեր ամբողջ ազգին փրկութեան յոյսը: Յաւիտենականութիւնը, ազգային գոյատեւումը եւ անոր համար մեր նահատակութիւնը չունէին ուրիշ մղիչ ոյժ, եթէ ոչ սերը հանդէպ Քրիստոսի եւ յոյսը՝ անոր հետ եւ միջոցաւ գտնելու ազգային մեր փրկութիւնը: Մեր նուիրումն ու հաւատքի կենսագործութիւնը եղան հոգիի ազատութեան գերագոյն արտայայտութիւնը, եւ ի պահանջել հարկին, Քրիստոսի հետ ազատ ապրիլը եղաւ ազգային մեր «Հաւատամք»ը եւ հաւաքական մեր երթը: Այսպէս ապրեցանք, այսպէս քարոզեցինք, այսպէս գոյատեւեցինք:

Մեր նշանաբանը եղաւ «Վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց», ինչպէս Վարդանանք յայտարարեցին եւ իրենց նահատակութեամբ ազգային ազատութիւնը գրկեցին: Հոգիի ազատութեան մեր հաւատքը ապացուցուեցաւ մեր անձնուիրութեամբ, նահատակութեամբ ու յաղթանակով:

¹ Յիսուս եբրայերէն՝ Եոշուա, կը նշանակէ «Տերը կը փրկէ», կամ «Տերը փրկութիւն է»:



ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋ ՆՈՐԴԱՐԱՆ
ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

2018 տարուան առաջին այս օրերուն, տարուան տարեթիւը մեզի կը յուշէ հարիւր տարի առաջ ուրիշ զոհողութիւն մը, պայքար ու յաղթանակ մը: Մայիս 28, 1918-ին, մեր ազգին պոռթկումը ուրիշ բան չէր, եթէ ոչ ազատութեան թռիչքը, ցեղասպանութենէն՝ ազգային խաչելութենէն ետք յարութիւնն ու յաղթանակը: Դարերով ազգային մեր կեանքը՝ Քրիստոսի սիրով հարստացած ու զօրացած, մեր հերոսներն ու ժողովուրդը արտայայտեցին Հայրենիքին հանդէպ սիրով: «Վասն հաւատոյ եւ հայրենեաց» անլռելի կանչը մղեց զանոնք գերագոյն զոհողութեան եւ փրկութեան: Չէ՞ որ Քրիստոսի հանդէպ մեր հաւատքը փրկութեան ճամբան է: Այո՛, նոյն այդ հաւատքը նահատակութեամբ սրբացած մեր հայրենիքին հանդէպ, մղեց մեր ժողովուրդը դէպի պայքարի դաշտ, հայրենիքի հանդէպ հաւատքի շօշափելի վկայութեան եւ յաղթանակի: Հոգիի ազատութիւնը սաւառնեցաւ արիւնով ու քրտինքով նուիրականացած մեր հայրենի հողերուն վրայ, որուն համար նահատակութիւնը՝ զինուորին թէ շինականին, համարուեցաւ պատիւ եւ այդ պատիւին պաշտպանութիւնը՝ փառաւորում:

Մայիսեան պայծառ եւ յաւիտենական պատգամ ունեցող հարիւրամեակին առիթով, անհրաժեշտ է համազգային ընդառաջումով նուիրուիլ ազատութեան գաղափարին հիմքը կազմող քրիստոնէական մեր հաւատքին, եւ անոր միջոցաւ միս ու ջիղ կազմած, նկարագիր կազմած մեր ազգային ազատութեան ոգիին: Անմեռ է այդ ազատութիւնը, եւ մեր հաւատքի Աստուծոյն նման՝ յաւիտենական: Եւ այս ճշմարտութեան հաւատարիմ հայորդիներս, այսօր կոչուած ենք մնալու նոյն հաւատարմութեան մէջ, Քրիստոսի ծնունդով մեզի բերուած փրկութիւնը դարձնելու ուխտ՝ Մայիսեան յաղթանակով շահուած մեր ազգին փրկութեան: Եւ ինչպէս Քրիստոսի հանդէպ անհաւատարմութիւնը իր դիմաց ունի Աստուծոյ դատաստանը, նոյնպէս ալ հայրենիքին հանդէպ անտարբերութիւնը ունի մեր ազգին դատաստանը:

Ուստի, Յիսուսի ծննդեան յիշատակի այս օրերուն, մեր պատգամն է, որ ազգովին հաւատարիմ մնանք մեր հաւատքի ճշմարտութեանց, ապրինք Յիսուսով, մեր Փրկիչով եւ ազգովին նուիրուինք մեր Հայրենիքի հզօրացման ու յաւերժութեան:

Եւ այն ատեն, թող Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը շնորհաւոր ըլլայ բոլորիս:

Աղօթարար՝

ՕՇԱԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ Ամերիկայի Արեւելեան Թեմին

1 Յունուար, 2018